

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդիկան սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային կարգավորման ենթակա լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Սակագների հաշվարկման կարգը:
2. Էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային կարգավորման ենթակա են Հանձնաժողովի կողմից հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեության հետևյալ տեսակները.
 - 1) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն՝ ԿԷԱ կայանների, ՎԷԱ կայանների, ՊԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի կողմից,
 - 2) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցում,
 - 3) էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցում,
 - 4) էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցում,
 - 5) Հանձնաժողովի սահմանած դեպքերում ԷՄՇ մասնակիցների կողմից Համակարգային ծառայությունների մատուցում,
 - 6) Բաշխման ծառայության մատուցում,
 - 7) Երաշխավորված մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի վաճառք սպառողներին:
3. Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Լիցենզավորված անձի լիցենզիայի պայմանների կամ ՊՄԳ մաս կազմող սակագնային համաձայնագրում Սակագների ձևավորման այլ մոտեցումներ ամրագրված լինելու դեպքում կիրառվում են տվյալ մոտեցումները, իսկ ՎԷԱ

կայանների համար կիրառվում են հաստատուն սակագներ՝ համապատասխան ճշգրտման մեխանիզմներով:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն մեթոդիկայում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

- 1) **Անուղղակի ծախսեր՝** էլեկտրական էներգիայի բաշխման գործունեությանը վերաբերող ծախսեր, որոնք ընդհանուր են Բաշխման ցանցի տեխնոլոգիական տարրերի համար և կարելի է պայմանականորեն բաշխել նրանց միջև միայն որոշակի սկզբունքի հիման վրա.
- 2) **Արտադրող՝** էլեկտրական էներգիայի (իզորության) արտադրության իրավունք ունեցող և փաստացի արտադրող անձ, բացառությամբ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում գտնվող կայանի.
- 3) **Բաշխման ծառայություն՝** Բաշխողի կողմից այլ անձանց, այդ թվում՝ Երաշխավորված մատակարարի, Մատակարարների կամ մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիան Բաշխման ցանցով սպառողներին (բաժանորդներին), այդ թվում՝ Որակավորված սպառողներին բաշխելու ծառայություն.
- 4) **Բաշխման ցանց՝** Բաշխողի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ.
- 5) **Բաշխող՝** էլեկտրական էներգիայի (իզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձ.
- 6) **Բաշխողի սակագնային համաձայնագիր՝** Հանձնաժողովի հաստատած «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու լիցենզիայի պայմանների հավելված.
- 7) **Բաշխողի փոխհատուցման գումար՝** Բաշխողի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերության՝ հաշվարկային և փաստացի մեծությունների շեղման

- արդյունքում ձևավորված՝ Սակագներով Բաշխողին փոխհատուցման ենթակա կամ Բաշխողի կողմից վերադարձման ենթակա գումարն է, որը որոշվում է Բաշխողի սակագնային համաձայնագրի համաձայն.
- 8) **Երաշխավորված մատակարար՝** Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ.
- 9) **Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագիր՝** Հանձնաժողովի հաստատած «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնելու լիցենզիայի պայմանների հավելված.
- 10) **Երաշխավորված մատակարարի փոխհատուցման գումար՝** Երաշխավորված մատակարարի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի ու Բաշխման ծառայության արժեքի տարբերության՝ հաշվարկային և փաստացի մեծությունների շեղման արդյունքում ձևավորված՝ Սակագներով Երաշխավորված մատակարարին փոխհատուցման ենթակա կամ Երաշխավորված մատակարարի կողմից վերադարձման ենթակա գումարն է, որը որոշվում է Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն.
- 11) **Էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշիռ (ԷՀՏՀ)՝** Էլեկտրական էներգիայի սպառման, կորուստների և սեփական կարիքների, արտադրության, արտահանման և ներկրման ԷՄՇ կանոններով սահմանված կանխատեսվող տարեկան ցուցանիշների համախումբ.
- 12) **ԷՀՑ կանոններ՝** Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոններ.
- 13) **ԷՄՇ՝** Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկա.
- 14) **ԷՄՇ կանոններ՝** Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ.

- 15) **ԷՄՇ մասնակիցներ՝** Արտադրող, Երաշխավորված մատակարար, Մատակարար, մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձ, Որակավորված սպառող, Հաղորդող, Բաշխող, Համակարգի օպերատոր և Շուկայի օպերատոր.
- 16) **ՎԷԱ կայան՝** 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող՝ ԷՄՇ կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի, ՎԷԱ կայանի, ՀԷԱ կայանի և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի.
- 17) **Հաղորդման ցանց՝** Հաղորդողի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի (ենթակայանների և այլ սարքավորումների) միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան հաղորդվում է Բաշխման ցանց, սպառողին, արտահանվում (ներկրվում) և (կամ) տարանցվում է երրորդ երկիր.
- 18) **Հաղորդող՝** էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձ.
- 19) **Համակարգային ծառայություններ՝** էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և անվտանգ աշխատանքի համար ԷՄՇ մասնակիցների կողմից ԷՀՑ կանոններով սահմանված դեպքերում և կարգով մատուցվող ծառայություններ.
- 20) **Համակարգի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձ.
- 21) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- 22) **Հաշվարկային տարի՝** Հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման նպատակով կիրառվող 12-ամսյա ժամանակաշրջան.
- 23) **Հաշվեկշռման ծառայություն՝** ԷՀՑ կանոններով նախատեսված Համակարգային ծառայության տեսակ.
- 24) **ՀԷԱ կայան՝** Հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող Արտադրող.

- 25) **Մատակարար՝** Էլեկտրական Էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձ.
- 26) **Ներդրում՝** Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են Էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեությունների համար օգտակար և օգտագործվող ակտիվների ավելացմանը, փոխարինմանը, արդիականացմանը կամ վերականգնմանը.
- 27) **Շուկայի օպերատոր՝** Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ.
- 28) **Որակավորված սպառող՝** ԷՄՇ կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով Շուկայի օպերատորի կողմից որակավորված ճանաչված սպառող.
- 29) **ՊԷԱ կայան՝** ՊՄԳ շրջանակում գործող Արտադրող, բացառությամբ ՀԷԱ կայանի.
- 30) **ՊՄԳ՝** պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված պայմանագիր.
- 31) **Սակագին՝** Էլեկտրական Էներգիայի (հզորության) միավորի վաճառքի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար Հանձնաժողովի կողմից «Էներգետիկայի մասին» օրենքին համապատասխան սահմանված առավելագույն գին կամ վճար.
- 32) **ՎԷԱ կայան՝** «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված Էլեկտրական Էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի.
- 33) **Ուղղակի ծախսեր՝** Էլեկտրական Էներգիայի բաշխման գործունեությանը վերաբերող ծախսեր, որոնք կարելի է ուղղակիորեն և հստակ վերագրել Բաշխման ցանցի կոնկրետ տեխնոլոգիական տարրին:

ԲԱԺԻՆ 2.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՍՈՒՅԹԻ ՈՐՈՇՈՒՄ

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Սակագնային կարգավորման ենթակա լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց Սակագների ձևավորման հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, որը պետք է բավարարի հուսալի, անվտանգ և շարունակական լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ ու հիմնավորված՝
- 1) ծախսերի իրականացմանը,
 - 2) օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցմանը,
 - 3) ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթի ստացման ապահովմանը:
6. Լիցենզավորված անձանց տնտեսական այլ գործունեության ծախսերը չեն ներառվում Սակագների հաշվարկում: Լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված հիմնական միջոցների՝ այլ նպատակներով օգտագործումից գոյացած լրացուցիչ եկամուտները և էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի առևտրի իրականացումից ստացված լրացուցիչ եկամուտները ենթակա են նվազեցման այդ անձանց անհրաժեշտ հասույթից՝ սույն մեթոդիկայով սահմանված դեպքերում և կարգով:
7. Անհրաժեշտ հասույթը (ԱՀ) յուրաքանչյուր Լիցենզավորված անձի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $ԱՀ = ՎԾ + ԳԷ + ԸՊԾ + ՎՍԾ + ՖԾԵ + ՄԾ + ԹՇ$, որտեղ՝
- 1) **ՎԾ**-ն Արտադրողների վառելիքային ծախսերն են (դրամ),
 - 2) **ԳԷ**-ն էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսերն են (դրամ),
 - 3) **ԸՊԾ**-ն շահագործման և պահպանման ծախսերն են (դրամ),
 - 4) **ՎՍԾ**-ն Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակում ստեղծվող ակտիվների ֆինանսավորմանն ուղղված ծախսերն են (դրամ),
 - 5) **ՖԾԵ**-ն ֆինանսական լրացուցիչ ծախսերի և եկամուտների տարբերության արդյունքում ձևավորվող գումարն է (դրամ),

- 6) ՄԾ-ն օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի տարեկան ծախսերն են (դրամ),
- 7) ԹԾ-ն թույլատրելի շահույթն է (դրամ):
8. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ Հաշվարկային տարվա ծախսերի որոշման համար հիմք է հանդիսանում Հաշվարկային տարվան ամենամոտ տասներկուամսյա ժամանակահատվածի (փորձնական տարի) ծախսերի վերլուծությունը:
9. Անհրաժեշտ հասույթը վերահաշվարկվում է կիրառելով հետևյալ մոտեցումները.
- 1) ծախսերի նորմալացում, որի դեպքում փորձնական տարվա ընթացքում կատարված ծախսերը համապատասխանեցվում են Հաշվարկային տարվա ընթացքում կատարվող ծախսերին,
 - 2) հայտնի չափարկելի և կանխատեսելի փոփոխությունների դիտարկում, որոնք պետք է հաշվի առնվեն Հաշվարկային տարվա անհրաժեշտ հասույթում:
10. Սույն գլուխը չի տարածվում՝
- 1) ՎԷԱ կայանների վրա, որոնց Սակագները որոշվում են սույն մեթոդիկայի 14-րդ գլխի համաձայն,
 - 2) ՊԷԱ կայանների վրա, որոնց Սակագները որոշվում են ՊՄԳ-ի համաձայն,
 - 3) ՊՄԳ-ի շրջանակում գործող ՀԷԱ կայանների վրա, որոնց Սակագները որոշվում են ՊՄԳ-ի համաձայն,
 - 4) Բաշխողի վրա, որի անհրաժեշտ հասույթը որոշվում է Բաշխողի սակագնային համաձայնագրի համաձայն,
 - 5) Երաշխավորված մատակարարի վրա, որի անհրաժեշտ հասույթը որոշվում է Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

11. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ վառելիքային ծախսերը (ՎԾ) հաշվի են առնվում միայն ջերմային և ատոմային ԿԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի Սակագների հաշվարկներում: Զերմային ԿԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի վառելիքային ծախսերը որոշվում են Համակարգի օպերատորի կողմից մշակված և այդ

կայանների հետ համաձայնեցված՝ Հաշվարկային տարվա ԷՀՏՀ-ով տվյալ կայանների համար պլանավորվող էլեկտրական էներգիայի առաքման ծավալների, վառելիքի տեսակարար ծախսի և Հաշվարկային տարվա համար կանխատեսված օգտագործվող վառելիքի գների հիման վրա: Ատոմային ԿԷԱ կայանի վառելիքային ծախսը որոշվում է Հաշվարկային տարվա համար միջուկային վառելիքի ձեռքբերման նպատակով կնքված (կնքվող) պայմանագրի շրջանակում ձեռքբերվող վառելիքի, դրա տեղափոխման ծախսերի և տեղափոխման հետ կապված այլ ծախսերի արժեքին համապատասխան:

ԳԼՈՒԽ 5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՋՈՐՈՒԹՅԱՆ) ԳՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

12. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ էլեկտրական էներգիայի (իզոլորության) գնման ծախսերը (ԳԷ) հաշվի են առնվում միայն՝
- 1) Երաշխավորված մատակարարի, Հաղորդողի և Բաշխողի Սակագների հաշվարկում իրենց սպառողների, Հաղորդման ցանցում ու Բաշխման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և իրենց սեփական ու տնտեսական կարիքների համար էլեկտրական էներգիա գնելու նպատակով,
 - 2) ԿԷԱ կայանների, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի Սակագների հաշվարկում՝ իրենց սեփական ու տնտեսական կարիքների համար էլեկտրական էներգիա գնելու նպատակով, ինչպես նաև Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի դեպքում՝ նաև հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով անհրաժեշտ էլեկտրական էներգիա գնելու համար:
13. Էլեկտրական էներգիայի (իզոլորության) գնման ծախսերը (ԳԷ) որոշվում են էլեկտրական էներգիայի կորուստների մասով ԷՀՏՀ-ով նախատեսված, իսկ սեփական ու տնտեսական կարիքների մասով Հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ տարեկան կանխատեսվող հաշվարկային մեծությունների և դրանց ձեռքբերման կանխատեսվող գների հիման վրա, բացառությամբ Երաշխավորված մատակարարի և Բաշխողի, որոնց համար որոշվում են համապատասխանաբար՝ Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի և Բաշխողի սակագնային համաձայնագրի համաձայն:

ԳԼՈՒԽ 6. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

14. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ շահագործման և պահպանման ծախսերը (ՇՊԾ) հաշվի են առնվում ԿԷԱ կայանների, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի, Բաշխողի և Երաշխավորված մատակարարի Սակագների հաշվարկում և որոշվում են վերջիններիս (բացառությամբ Բաշխողի և Երաշխավորված մատակարարի) փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով սույն մեթոդիկայի 9-րդ կետով ամրագրված մոտեցումները: Շահագործման և պահպանման ծախսերում չեն ընդգրկվում լիցենզավորված գործունեության հետ չառնչվող ծախսերը, որոնց համար Լիցենզավորված անձիք իրականացնում են առանձնացված հաշվառում: Բաշխողի և Երաշխավորված մատակարարի շահագործման և պահպանման ծախսերը որոշվում են համապատասխանաբար՝ Բաշխողի սակագնային համաձայնագրի և Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն:
15. Շահագործման և պահպանման ծախսերում ներառվում են Հաշվարկային տարվա ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար, այդ թվում՝
- 1) նորոգման ծախսերը,
 - 2) նյութական ծախսերը,
 - 3) աշխատանքի վարձատրության ծախսերը,
 - 4) օրենսդրությամբ սահմանված հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից), տուրքերը ու պարտադիր այլ վճարները,
 - 5) օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը:

ԳԼՈՒԽ 7. ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱԽՍԵՐ

16. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման ծախսերը (ՎՍԾ) հաշվի են առնվում ԿԷԱ կայանների, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի, Շուկայի օպերատորի, Բաշխողի, Երաշխավորված մատակարարի և ՊՄԳ-ով նախատեսված լինելու դեպքում՝ ՊԷԱ կայանների ու ՀԷԱ կայանների Սակագների հաշվարկում և որոշվում է տվյալ

Լիցենզավորված անձի առկա պարտքերի մարման և սպասարկման ժամանակացույցի հիման վրա, բացառությամբ Բաշխողի և Երաշխավորված մատակարարի, որոնց դեպքում՝ համաձայն Բաշխողի սակագնային համաձայնագրի և Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի:

ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԳՈՒՄԱՐ

17. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ ֆինանսական լրացուցիչ ծախսերի և եկամուտների արդյունքում ձևավորվող լրացուցիչ գումարը (ՖԾԵ) հաշվի է առնվում ԿԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի, Շուկայի օպերատորի, Բաշխողի և Երաշխավորված մատակարարի Սակագների հաշվարկում և որոշվում է հետևյալ բանաձևով, բացառությամբ Բաշխողի և Երաշխավորված մատակարարի, որոնց դեպքում՝ համաձայն Բաշխողի սակագնային համաձայնագրի և Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի.

ՖԾԵ=ΔՎԾ+ΔԱՀ–ՖԱԵ+ΔՖԾԵ, որտեղ՝

- 1) **ΔՎԾ-ն** ատոմային ԿԷԱ կայանի՝ էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ վառելիքային ծախսի փոփոխությամբ պայմանավորված լրացուցիչ ծախսը կամ լրացուցիչ եկամուտն է (դրամ),
- 2) **ΔԱՀ-ն** ԿԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի և Շուկայի օպերատորի փաստացի գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ հասույթի շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա դեֆիցիտը կամ վերադարձման ենթակա լրացուցիչ հասույթն է (դրամ),
- 3) **ՖԱԵ-ն** Լիցենզավորված անձի կողմից ստացված ֆինանսական այլ եկամուտն է (դրամ),
- 4) **ΔՖԾԵ-ն** գործող Սակագների գործողությունը 12 ամսից պակաս կամ 12 ամսից ավել տևելու դեպքում ՖԾԵ-ի ճշգրտման մեծությունն է (դրամ):

18. Ատոմային ԿԷԱ կայանի դեպքում էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ վառելիքային ծախսի փոփոխության (ΔՎԾ) չափը որոշվում է հետևյալ բանաձևով. **ΔՎԾ = Վ_{սփ} - Վ_ս**, որտեղ՝

1) Վ_{աֆ}-ն Հաշվարկային տարվան նախորդող այն ժամանակահատվածում միջուկային վառելիքի համար փաստացի վճարումներն են՝ համաձայն պայմանագրով նախատեսված ժամանակացույցի, որի համար սույն ենթակետով չի հաշվարկվել և Սակագնում չի ներառվել արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքի տատանումներով պայմանավորված վառելիքային ծախսի փոփոխության գումար (դրամ),

2) Վ_{աՀ}-ն Հաշվարկային տարվան նախորդող այն ժամանակահատվածում Սակագնի հաշվարկում ընդունված միջուկային վառելիքի արժեքն է փաստացի վճարումներին համապատասխան՝ համաձայն պայմանագրով նախատեսված ժամանակացույցի, որի համար սույն ենթակետով չի հաշվարկվել և Սակագնում չի ներառվել արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքի տատանումներով պայմանավորված վառելիքային ծախսի փոփոխության գումար (դրամ):

19. ԿԷԱ կայանների, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի, Շուկայի օպերատորի և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի փաստացի գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ հասույթի շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա դեֆիցիտը կամ վերադարձման ենթակա լրացուցիչ հասույթը (ΔԱՀ)՝

1) ԿԷԱ կայանների, Համակարգի Օպերատորի և Շուկայի օպերատորի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով. $\Delta UZ = \sum_{i=1}^m (\Gamma \Theta_i^C - \Gamma \Theta_i^P) * U_i * \left(1 + \frac{m * S}{100\%}\right)$, որտեղ՝

ա. **m-ը** Հանձնաժողովի նիստին Սակագնի վերանայման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող այն ժամանակահատվածի ամիսներն են (բացառությամբ նշված նախագծի ներկայացման ամսվան նախորդող ամսվա), որոնց համար սույն կետի համաձայն չի հաշվարկվել և Սակագնում չի ներառվել ΔԱՀ գումար (առաջին անգամ հաշվարկվում է էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկայի գործարկման ամսվաթվից սկսած ժամանակահատվածի համար),

բ. **ΓΘ^C-ն** i-րդ ամսում առաքվող էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության հաշվարկային քանակն է (կՎտժ),

գ. **ΓΘ^P-ն** i-րդ ամսում առաքված էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության փաստացի քանակն է (կՎտժ)՝ ԿԷԱ կայանների դեպքում ավելացնելով պլանային

նորոգումներից դուրս ժամանակահատվածում վերջինիս պատրաստական վիճակում չգտնվելու հետևանքով պակաս առաքված էլեկտրական էներգիայի քանակը, որի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Համակարգի օպերատորը, ինչպես նաև ջրային ռեսուրսի կիրառմամբ գործող ԿԷԱ կայանի դեպքում նվազեցնելով Սևանա լճից բաց թողնվող ջրի սահմանված հիմնական ծավալը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրված էլեկտրական էներգիայի քանակը՝ դրա հաշվին ստացվող լրացուցիչ գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կամ արտաբյուջետային հաշվին վճարման ենթակա լինելու դեպքում,

դ. **Ս-ն** i-րդ ամսում գործող Հանձնաժողովի կողմից սահմանված Սակագինն է՝ ԿԷԱ կայանների դեպքում հանած էլեկտրական էներգիայի արտադրության համար նախատեսված և վերջինից ուղղակիորեն կախվածության մեջ գտնվող վառելիքային բաղադրիչը (դրամ/կՎտժ),

ե. **Տ-ն** հաշվարկային և փաստացի քանակների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման կամ վերադարձման ենթակա դրամական միջոցների ներգրավման, կամ հնարավոր ավանդադրման համար անհրաժեշտ ամսական տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 1 տոկոս,

2) Հաղորդողի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta UZ = \sum_{i=1}^m \left((F\sigma_i^C - F\sigma_i^P) * U_i - GZ_i^C + GZ_i^P \right) * \left(1 + \frac{m*S}{100\%} \right), \text{ որտեղ՝}$$

ա. **ԳԷՀ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնվող էլեկտրական էներգիայի հաշվարկային արժեքն է (դրամ),

բ. **ԳԷՀ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի փաստացի արժեքն է (դրամ), ընդ որում նշված էլեկտրական էներգիան Հաղորդողի էլեկտրակայանում արտադրվելու դեպքում վերջինիս արժեքն այդ մասով որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար Հանձնաժողովի սահմանած Հաշվեկշռման նվազագույն սակագնով,

3) Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով.

$\Delta U_C = (\sum_{i=1}^k (\text{ԻԾ}\zeta_i * \text{ՎՍ}_i) - \text{ՎԾ}_C - \text{ԾԱ}_C - \text{ԷԳ}_C) - (\sum_{i=1}^k (\text{ԻԾ}\Phi_i * \text{ՎՍ}_i) - \text{ՎԾ}_\Phi - \text{ԾԱ}_\Phi - \text{ԷԳ}_\Phi)$, որտեղ՝

- ա. **ԻԾ** ζ_i -ն i-րդ գնորդին առաքվող էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության հաշվարկային քանակն է, բացառությամբ գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակության գործարքի շրջանակում առաքվող էլեկտրական էներգիայի (կՎտժ)՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ $_i$ մեծությունը,
- բ. **ՎՍ** $_i$ -ն i-րդ գնորդին առաքվող (առաքված) էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության Հանձնաժողովի սահմանած սակագինը կամ Հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա չլինելու դեպքում՝ պայմանագրային գինն է, որը հաշվարկային ժամանակահատվածի տարբեր ամիսներին տարբեր մեծություններ լինելու դեպքում ընդունվում է միջին կշռված մեծությանը հավասար (դրամ/կՎտժ),
- գ. **ՎԾ** $_C$ -ն Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ գնվող վառելիքի ծախսի հաշվարկային մեծությունն է (դրամ)՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ $_i$ մեծությունը,
- դ. **ԾԱ** $_C$ -ն գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակության գործարքի և ԷՄՇ կանոններով նախատեսված դեպքերում էլեկտրական էներգիայի արտահանման շրջանակում գազամատակարարման և էլեկտրաէներգետիկական համակարգերում մատուցվող ծառայությունների հաշվարկային արժեքն է՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ $_i$ մեծությունը (դրամ),
- ե. **ԷԳ** $_C$ -ն Հաշվեկշռման ծառայության շրջանակում և պարտավորությունների կատարման նպատակով գնվող էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվարկային արժեքն է՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ $_i$ մեծությունը (դրամ),
- զ. **ԻԾ** Φ_i -ն i-րդ գնորդին առաքված էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության փաստացի քանակն է, բացառությամբ գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակության գործարքի շրջանակում առաքված էլեկտրական էներգիայի (կՎտժ)՝ Հանձնաժողովի նիստին Սակագնի վերանայման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող այն ժամանակահատվածի համար, որի

մասով առկա է համապատասխան տեղեկատվություն, սույն ենթակետի համաձայն չի հաշվարկվել և Սակագնում չի ներառվել ΔԱՀ գումար (առաջին անգամ հաշվարկվում է էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկայի գործարկման ամսվաթվից սկսած ժամանակահատվածի համար), ընդ որում Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի ֆինանսական դրության վերաբերյալ ամբողջական պատկեր ունենալու նպատակով ցուցանիշի հաշվարկման նպատակով կարող է ներառվել նաև մինչև ընթացիկ սակագնային տարվա ավարտն ընկած ժամանակահատվածի կանխատեսումները՝ հետագայում փաստացի ցուցանիշների հիման վրա ճշգրտելու պայմանով,

է. **ՎԾՔ**-ն Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ գնված վառելիքի ծախսի փաստացի մեծությունն է (դրամ)՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ: մեծությունը,

ը. **ԾԱՔ**-ն գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակության գործարքի և ԷՄՇ կանոններով նախատեսված դեպքերում էլեկտրական էներգիայի արտահանման շրջանակում գազամատակարարման և էլեկտրաէներգետիկական համակարգերում մատուցված ծառայությունների փաստացի արժեքն է՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ: մեծությունը (դրամ),

թ. **ԷԳՔ**-ն Հաշվեկշռման ծառայության շրջանակում և պարտավորությունների կատարման նպատակով գնված էլեկտրական էներգիայի (հզորության) փաստացի արժեքն է՝ այն ժամանակահատվածի համար, որի մասով հաշվարկվել է ԻԾՓ: մեծությունը (դրամ):

20. Լիցենզավորված անձի կողմից ստացված ֆինանսական այլ եկամուտը (ՖԱԷ) ներառում է՝

- 1) ԷՄՇ կանոններով սահմանված դեպքերում Հանձնաժողովի հաստատած Սակագնից ավելի բարձր գնով էլեկտրական էներգիայի վաճառքից ստացած լրացուցիչ եկամտի և ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների արդյունքում ձևավորված լրացուցիչ ծախսի դրական տարբերության 85 տոկոսը,

- 2) լիցենզավորված գործունեության համար ներգրավված հիմնական միջոցների այլ նպատակներով օգտագործումից ստացվող լրացուցիչ հասույթների և դրանց պատճառով առաջացող լրացուցիչ ծախսերի դրական տարբերության 50 տոկոսը,
- 3) Լիցենզավորված անձի հետ քննարկումների արդյունքում Հանձնաժողովի կողմից հիմնավոր համարված այլ եկամուտները:

21. **ΔΦԾԵ** մեծությունն ընդունվում է հավասար գրոյի, եթե գորող Սակագնի տևողությունը կազմում է 12 ամիս, իսկ 12 ամսից պակաս կամ ավել տևելու դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով. $\Delta\Phi\mathcal{D}\mathcal{E} = \Phi\mathcal{D}\mathcal{E}_q * \left(1 - \frac{\mathcal{D}\mathcal{D}\Phi_q}{\mathcal{D}\mathcal{D}\mathcal{Z}_q}\right)$, որտեղ՝

- 1) **ΦԾԵ_q-ն** գործող Սակագների հաշվարկներում ներառված՝ ֆինանսական լրացուցիչ ծախսերի և եկամուտների արդյունքում ձևավորվող լրացուցիչ գումարն է (դրամ),
- 2) **Օր-ն** գործող Սակագների գործողության օրերի թիվն է,
- 3) **ԻԾΦ_q-ն** գործող Սակագների տևողության ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության փաստացի քանակն է (կՎտժ)՝ հաշվի առնելով սույն մեթոդիկայի 19-րդ կետի 1-ին ենթակետի «ԻԾΦ» մեծության որոշման ժամանակ ավելացվող և նվազեցվող քանակները,
- 4) **ԻԾՀ_q-ն** գործող Սակագների հաշվարկներում ներառված առաքվող էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայության տարեկան հաշվարկային քանակն է (կՎտժ):

ԳԼՈՒԽ 9. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱՅԻ ԾԱԽՍ

22. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսերը (ՄԾ) հաշվի են առնվում ԿԷԱ կայանների, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի, Շուկայի օպերատորի, Բաշխողի, Երաշխավորված մատակարարի և ՊՄԳ-ով նախատեսված լինելու դեպքում՝ ՊԷԱ կայանների ու ՀԷԱ կայանների Սակագների հաշվարկներում և որոշվում են գծային եղանակով՝ ելնելով լիցենզավորման ենթակա տվյալ տեսակի գործունեության համար Հանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքից և օգտակար ծառայության

Ժամանակահատվածից: Օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքից հանվում է որպես նվիրատվություն ստացված ակտիվների արժեքը, այդ ակտիվների ստեղծման նպատակով ստացված ցանկացած միջոցները և լիցենզավորված (կարգավորվող) գործունեությանը մասնակցող կամ երբևէ մասնակցած ակտիվների (բացառությամբ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերից դուրս ձեռքբերված և սակագնով չփոխահատուցվող ակտիվների) օտարումից առաջացող եկամուտը:

23. Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկում չի ընդգրկվում Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին ստեղծված ակտիվների արժեքը, եթե առանձին ծրագրերի համար այլ բան նախատեսված չէ Լիցենզավորված անձին տրված լիցենզիայի պայմաններով: Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին ստեղծված ակտիվների արժեքը ընդգրկվում է հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկում, ապա անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ ՎՍԾ մեծության մեջ ներառվում են միայն այդ վարկերի սպասարկման, սակայն ոչ մարման ծախսերը:

ԳԼՈՒԽ 10. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՇԱՀՈՒՅԹ

24. Անհրաժեշտ հասույթի որոշման ժամանակ թույլատրելի շահույթը (ԹՇ) հաշվի է առնվում ԿԷԱ կայանների, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանների, Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի, Հաղորդողի, Համակարգի Օպերատորի, Շուկայի օպերատորի, Բաշխողի, Երաշխավորված մատակարարի և ՊՄԳ-ով նախատեսված լինելու դեպքում՝ ՊԷԱ կայանների ու ՀԷԱ կայանների Սակագների հաշվարկում և որոշվում է հետևյալ բանաձևով, բացառությամբ Բաշխողի և Երաշխավորված մատակարարի, որոնց դեպքում՝ համաձայն Բաշխողի սակագնային համաձայնագրի և Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի. $\text{ԹՇ} = \text{ԿԱԲ} * \text{ՇՆ} / 100$, որտեղ՝

- 1) **ԿԱԲ**-ն կարգավորվող ակտիվների բազայի արժեքն է (դրամ),
- 2) **ՇՆ**-ն թույլատրելի շահույթի նորման է մինչև հարկումը (տոկոս):

25. Թույլատրելի շահույթի նորման սահմանվում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից:

ԳԼՈՒԽ 11. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԲԱԶԱ

26. Կարգավորվող ակտիվների բազան (ԿԱԲ) արտացոլում է Հանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $\text{ԿԱԲ} = \text{ԿԱԲ}_{\text{ԳՍ}} + \text{ՕՕԱ} - \text{ՄԾ}_{\text{ԳՍ}} + \text{ՇԿ}$, որտեղ՝

- 1) $\text{ԿԱԲ}_{\text{ԳՍ}}$ -ն գործող Սակագների հաշվարկում ներառված կարգավորվող ակտիվների բազան է՝ զուտ արժեքը (դրամ),
- 2) ՕՕԱ -ն Սակագնի վերջին վերանայումից հետո Հանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված նոր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքն է՝ հանած որպես նվիրատվություն ստացված ակտիվների արժեքը, այդ ակտիվների ստեղծման նպատակով ստացված ցանկացած միջոցները և լիցենզավորված (կարգավորվող) գործունեությանը մասնակցող կամ երբևէ մասնակցած ակտիվների (բացառությամբ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերից դուրս ձեռքբերված և սակագնով չփոխահատուցվող ակտիվների) օտարումից առաջացող եկամուտը (դրամ),
- 3) $\text{ՄԾ}_{\text{ԳՍ}}$ -ն գործող Սակագների հաշվարկում նախատեսված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունն է (դրամ),
- 4) ՇԿ -ն շրջանառու կապիտալի մեծությունն է (դրամ):

27. Շրջանառու կապիտալի մեծությունը (ՇԿ) հաշվի է առնվում սույն մեթոդիկայի 24-րդ կետում նշված Լիցենզավորված անձանց (բացառությամբ ՊՄԳ-ի շրջանակում գործող Լիցենզավորված անձանց) Սակագների հաշվարկում և որոշվում է հետևյալ բանաձևով, բացառությամբ Բաշխողի և Երաշխավորված մատակարարի, որոնց դեպքում՝ համաձայն Բաշխողի սակագնային համաձայնագրի և Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի. $\text{ՇԿ} = (\text{ՎԾ} + \text{ԳԷ} + \text{ՇՊԾ} + \text{ՎՄԾ}) * 30 / 365$:

28. Կարգավորվող ակտիվների բազան ժամանակ առ ժամանակ (բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ) վերահաշվարկվում է հաշվի առնելու համար՝

- 1) օգտակար և օգտագործվող ճանաչված ակտիվներում կատարված նոր Ներդրումները,
- 2) կուտակված մաշվածության և ամորտիզացիայի փոփոխությունը,

3) շրջանառու կապիտալի մեծության փոփոխությունը:

29. Կարգավորվող ակտիվների բազայում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին ստեղծված ակտիվները:

ԲԱԺԻՆ 3.

ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԳԼՈՒԽ 12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30. Սույն բաժինը սահմանում է ԷՄՇ-ում վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը Լիցենզավորված անձանց համար, բացառությամբ ՊԷԱ կայանների և ՊՄԳ ունեցող ՀԷԱ կայանների, որոնց Սակագները ձևավորվում են ՊՄԳ-ի համաձայն:

31. Սակագների մշակման գործընթացը, բացառությամբ ՎԷԱ կայանների, իրականացվում է երկու փուլով.

1) անհրաժեշտ հասույթի որոշում՝ սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն,

2) Սակագների կառուցվածքի ընտրություն, ծախսերի դասակարգում և սակագնային դրույքների հաշվարկ՝ սույն բաժնի պահանջներին համապատասխան:

32. Սակագները կարող են արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձև և տարբերակվել սպառման ծավալով, պատվիրված հզորությամբ, տարվա եղանակով, օրվա ժամերով, միացման պայմաններով, ծառայությունների տեսակներով, ինչպես նաև խոցելի սպառողներ լինելու հանգամանքով:

33. Սակագների կառուցվածքի ընտրությունը կատարվում է հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքը, էլեկտրաէներգետիկական համակարգի պահանջները և այդ պահանջները բավարարելու համար տվյալ Լիցենզավորված անձի՝ ծառայություններ մատուցելու հնարավորությունները:

34. Սակագների կառուցվածքի, սակագնային դրույքների միջոցով վճարման ենթակա ծառայությունների տեսակների ընտրությունը և անհրաժեշտության դեպքում դրանց միջև Լիցենզավորված անձի ծախսերի բաշխումն իրականացնում է Հանձնաժողովը՝ տվյալ Լիցենզավորված անձի ներկայացմամբ, բացառությամբ ՎԷԱ կայանների: Այն

Լիցենզավորված անձինք, որոնք, բացի էլեկտրական էներգիայի վաճառքից, մատուցում են նաև համակարգային ծառայություններ, պետք է վարեն դրանց առնչվող ծախսերի առանձնացված հաշվառում:

35. ԿԷԱ կայանները ԷՄՇ կանոնների համաձայն միանում են Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի հաշվեկշռման խմբին՝ վերջինիս լիազորելով իրենց հաշվեկշռման պատասխանատվությունը (այսուհետ՝ ՀՊԿԼ կարգավիճակ)՝ հետևյալ ժամկետներում և պայմաններով.

- 1) ոռոգելի ջրային ռեսուրսի կիրառմամբ գործող ԿԷԱ կայանը ՀՊԿԼ կարգավիճակ ստանում է Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասու մարմնի կողմից նախատեսված ոռոգման սեզոնի առաջին օրվան նախորդող 15-րդ օրվանից մինչև ոռոգման սեզոնի վերջին օրվան հաջորդող 15-րդ օրն ընկած ժամանակահատվածի համար,
- 2) ատոմային ԿԷԱ կայանը ՀՊԿԼ կարգավիճակ ստանում է Համակարգի օպերատորի հետ համաձայնեցված՝ էլեկտրակայանի պլանային նորոգման առաջին օրվան նախորդող 15-րդ օրվանից մինչև պլանային նորոգման վերջին օրվան հաջորդող 15-րդ օրն ընկած ժամանակահատվածի համար,
- 3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամանակահատվածից դուրս ԿԷԱ կայանները պետք է ստանան ԷՄՇ կանոններով սահմանված հաշվեկշռման պատասխանատվության այլ կարգավիճակ:

ԳԼՈՒԽ 13. ԿԷԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵԿՇՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

36. Սույն գլուխը սահմանում է ԿԷԱ կայաններից, ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանից և Հաշվեկշռման ծառայություն մատուցողից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը: Քանակի միավորներն իրենցից ներկայացնում են ֆիզիկական մեծություններ, որոնց նկատմամբ կիրառվում են վճարման դրույքները:

37. ԿԷԱ կայանից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի համար սահմանվում է միադրույք Սակագին ($T_{ԿԷԱ}$), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $T_{ԿԷԱ} = \frac{W_{ԿԷԱ}}{W_{un}}$, որտեղ՝

- 1) $U_{\text{ՀԷԱ}}^{\Phi}$ -ն ԿԷԱ կայանի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված տարեկան անհրաժեշտ հասույթն է (դրամ),
- 2) $W_{\text{առ}}$ -ն ԷՄՇ մասնակիցներին Հաշվարկային տարվա ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի կանխատեսվող մեծությունն է՝ համաձայն ԷՀՏՀ-ի (կՎտժ):

38. ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի Սակագները սահմանվում են երկդրույք սակագնային համակարգում, որի համաձայն՝

- 1) առաքվող էլեկտրական էներգիայի դրույքը ($T_{\text{ՀԷԱ}}^{\text{Էլ}}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$T_{\text{ՀԷԱ}}^{\text{Էլ}} = \frac{U_{\text{ՀԷԱ}}^{\Phi}}{W_{\text{առ}}}, \text{ որտեղ՝}$$

ա. $U_{\text{ՀԷԱ}}^{\Phi}$ -ն ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված և սույն մեթոդիկայի 12-րդ գլխի համաձայն բաշխված տարեկան անհրաժեշտ հասույթի փոփոխական մասն է (դրամ),

բ. $W_{\text{առ}}$ մեծությունը ԷՀՏՀ-ում գրո լինելու դեպքում $T_{\text{ՀԷԱ}}^{\text{Էլ}}$ -ն որոշվում է որպես միավոր էլեկտրական էներգիա առաքելու համար անհրաժեշտ վառելիքի միավոր ծախս՝ ելնելով Հանձնաժողովի կողմից ընդունված ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանի վառելիքի տեսակարար ծախսի մեծությունից,

- 2) հզորության ամսական դրույքը ($T_{\text{ՀԷԱ}}^{\text{Հզ}}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $T_{\text{ՀԷԱ}}^{\text{Հզ}} = \frac{U_{\text{ՀԷԱ}}^{\text{Հզ}}}{\sum_{t=1}^{12} N_t}$, որտեղ՝

ա. $U_{\text{ՀԷԱ}}^{\text{Հզ}}$ -ն ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված և սույն մեթոդիկայի 12-րդ գլխի համաձայն բաշխված տարեկան անհրաժեշտ հասույթի հաստատուն մասն է (դրամ),

բ. N_t -ն ՊՄԳ չունեցող ՀԷԱ կայանի համար Հանձնաժողովի սահմանած պայմանագրային պատրաստական հզորության մեծությունն է Հաշվարկային տարվա t -րդ ամսում (կՎտ):

39. Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի համար սահմանվում է միադրույք Սակագին ($T_{\text{ԱՀՏՄ}}$), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$T_{\text{ԱՀՏՄ}} = \frac{U_{\text{ԱՀՏՄ}} - U_{\text{այլ}}}{W_{\text{առ}} - W_{\text{արտ}} - W_{\text{այլ}}}, \text{ որտեղ՝}$$

- 1) $U_{\text{ԱՀՏՄ}}$ -ն Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված տարեկան անհրաժեշտ հասույթն է (դրամ),

- 2) ԱՀայր-ն Հաշվեկշռման ծառայության առավելագույն սակագնով և այլ գներով ԷՄՇ մասնակիցներին էլեկտրական էներգիայի վաճառքից ձևավորված հասույթն է (դրամ),
- 3) Մարտ-ն գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակության գործարքի շրջանակում Հաշվարկային տարվա ընթացքում արտահանվող էլեկտրական էներգիայի կանխատեսվող մեծությունն է՝ համաձայն ԷՀՏՀ-ի (կՎտժ),
- 4) Մայր-ն Հաշվեկշռման ծառայության առավելագույն սակագնով և այլ գներով ԷՄՇ մասնակիցներին վաճառվող էլեկտրական էներգիայի կանխատեսվող մեծությունն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ):

ԳԼՈՒԽ 14. ՎԷԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

40. Սույն գլուխը սահմանում է հետևյալ ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը.

- 1) բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով ամբողջությամբ, մասնակիորեն կամ համատեղության կարգով չեն օգտագործում այլ անձանց հիդրոկառույցներ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի համաձայն անօտարելի համարվող հողամասերում կառուցված հիդրոկառույցների) և էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիան ստացել են 2004 թվականի փետրվարի 9-ից հետո.
- 2) ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրաոն իրականացվում է ոռոգման համակարգերից և էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիան ստացել են 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո.
- 3) խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրաոն իրականացվում է խմելու ջրատարներից և էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիան ստացել են 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո՝ բացառությամբ խմելու ջրատարների վրա կառուցված այն փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց կառուցման լիցենզիան տրվել է մինչև 2005 թվականի նոյեմբերի 8-ը.

- 4) հողմային էլեկտրակայաններ, որոնք՝
 - ա. էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ ժամանակահատվածում.
 - բ. ունեն մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում.
 - գ. ունեն մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2021 թվականի դեկտեմբերի 31-ից հետո.
- 5) կենսազանգվածից (կենսազազից) էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, որոնք՝
 - ա. էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում.
 - բ. ունեն մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2020 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:
- 6) արևային էլեկտրակայաններ, որոնք էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի առաջարկած առավելագույն սահմանաչափերի շրջանակում ունեն՝
 - ա. մինչև 1 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ ժամանակահատվածում.
 - բ. մինչև 5 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում.
 - գ. մինչև 5 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2020 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, բացառությամբ սույն ենթակետի «դ» պարբերությամբ նշված էլեկտրակայանների.
 - դ. մինչև 1 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և այդ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան տրամադրվել է համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:

41. Սույն գլխի դրույթները կիրառելիս Հաշվարկային տարին ներառում է օրացուցային տարվա հուլիսի 1-ից մինչև հաջորդ օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

42. Սույն մեթոդիկայի 40-րդ կետի՝

1) 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ Սակագինը սահմանվում է 42.845 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ 2019 թվականի հունիսի 30-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,

2) 4-րդ ենթակետի «բ» և 6-րդ ենթակետի «բ» պարբերություններով նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինն առաջին անգամ սահմանվում է՝

ա. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ տվյալ ժամանակահատվածում գործող՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինն հավասար, իսկ 2019 թվականի հունիսի 30-ից հետո ուժի մեջ մտնելու և միաժամանակ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրության փուլ անցնելու (լիցենզիայում համապատասխան փոփոխություններ կատարելու) և Սակագին սահմանելու համար Հանձնաժողովի հաստատած կարգերով նախատեսված գործողությունները կատարելու և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ կարգով Հանձնաժողով ներկայացնելու դեպքում՝ նշված Սակագնի հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետում ամրագրված բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար, բացառությամբ սույն կետի 7-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

բ. 2022 թվականի հոկտեմբերի 31-ից հետո սույն ենթակետի «ա» պարբերությունում նշված գործողությունները կատարելու և (կամ) փաստաթղթերը ներկայացնելու, կամ մինչև նշված ժամկետը ներկայացված՝ լիցենզիայում փոփոխություն կատարելու և (կամ) Սակագին սահմանելու հայտի (դիմումի) ուսումնասիրության չընդունման կամ մերժման դեպքերում՝ արևային էլեկտրակայանների դեպքում 2021 թվականի հունվարի 1-ից հետո սույն մեթոդիկայի 40-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նշված, իսկ հողմային էլեկտրակայանների դեպքում 2022 թվականի հունվարի 1-ից հետո սույն մեթոդիկայի 40-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նշված տվյալ տեսակի կայանի լիցենզիա ստացող անձանց համար սահմանված սակագնային կարգավորման համաձայն,

- 3) 4-րդ ենթակետի «գ» և 6-րդ ենթակետի «գ» պարբերություններով նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ սակագինը սահմանվում է 30 ՄՎտ-ից ավելի հզորությամբ էներգիայի վերականգնվող ռեսուրսների (բացառությամբ ջրային էներգիայի աղբյուրի) կիրառմամբ էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիա ստացած էլեկտրակայանի բազիսային սակագնին հավասար (հաշվարկված Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ նորմատիվ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքով՝ հրապարակված Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից), իսկ 2023 թվականի հունիսի 30-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,
- 4) 5-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինն առաջին անգամ

սահմանվում է Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ուժի մեջ մտնելու դեպքում՝ 43.811 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ 2021 թվականի հունիսի 30-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,

- 5) 5-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինն առաջին անգամ սահմանվում է՝

ա. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում գործող՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի մեծությանը հավասար, իսկ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար.

բ. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ 30 ՄՎտ-ից ավելի հզորությամբ էներգիայի վերականգնվող ռեսուրսների (բացառությամբ ջրային էներգիայի աղբյուրի) կիրառմամբ էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիա ստացած էլեկտրակայանի բազիսային սակագնին հավասար (հաշվարկված Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ նորմատիվ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքով՝ հրապարակված Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից), իսկ 2023 թվականի

հունիսի 30-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,

- 6) 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինն առաջին անգամ սահմանվում է՝

ա. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ ընդունվելու դեպքում՝ 42.845 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ 2019 թվականի հունիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդունվելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,

բ. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդունվելու դեպքում՝ 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում գործող՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի հիման վրա սույն մեթոդիկայի 43-րդ կետում ամրագրված բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար,

գ. Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2021 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ընդունվելու դեպքում՝ 2021 թվականի հունվարի 1-ից հետո տվյալ տեսակի կայանի լիցենզիա ստացող անձանց համար սահմանված սակագնային կարգավորման համաձայն,

- 7) 6-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագինը՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը Բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների,

հաշվառման համակարգի, Բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ Բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում (վերանայվում) է սույն կետի 2-րդ ենթակետի «ա» կամ «բ» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

- 8) 6-րդ ենթակետի «դ» պարբերությամբ նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի նկատմամբ կիրառվում է 0,9 գործակցի՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը Բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, Բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ Բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում:

43. Հանձնաժողովը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագները սահմանում և վերանայում է հետևյալ հաշվարկային բանաձևով.

$$T_{\text{վԷԱ}} = T_{\text{վԷԱ1}} \left(K_1 * \frac{CPI}{100} + K_2 * \frac{R_1}{R_2} \right), \text{ որտեղ՝}$$

- 1) $T_{\text{վԷԱ}}$ -ն ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի հաջորդ Հաշվարկային տարվա համար սահմանվող Սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),
- 2) $T_{\text{վԷԱ1}}$ -ը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի ընթացիկ Հաշվարկային տարվա համար գործող Սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),
- 3) K_1 -ը գործող Սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսազանգվածից (կենսազազից) էլեկտրական էներգիա արտադրող կայանների, մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար ընդունվում է հավասար 0,35-ի, իսկ 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար՝ 0,1,

- 4) **CPI**-ն Հանձնաժողովի նիստին Սակագնի սահմանման վերաբերյալ նորմատիվ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող օրացուցային տարվա սպառողական գների ինդեքսն է դրան նախորդող նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից,
- 5) **K₂**-ը գործող Սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված և փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսազանգվածից (կենսազագից) էլեկտրական էներգիա արտադրող կայանների, մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար ընդունվում է հավասար 0,65-ի, իսկ 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար՝ 0,9,
- 6) **R₁**-ը Հանձնաժողովի նիստին Սակագնի սահմանման վերաբերյալ նորմատիվ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող տասներկու ամիսների (բացառությամբ այն ամիսների, որոնք ներառված են «T_{վԷԱ}» մեծության հաշվարկում) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքների միջին թվաբանական մեծությունն է,
- 7) **R₂**-ը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի «T_{վԷԱ}» մեծության հաշվարկում ներառված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքն է:

44. Սակագների վերանայումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը: Վերանայման արդյունքում սահմանված Սակագներն ուժի մեջ են մտնում տվյալ տարվա հուլիսի 1-ից, իսկ այն ՎԷԱ կայանների համար, որոնցից առաքվող էլեկտրական էներգիայի Սակագնի սահմանման որոշման գործողության 6 ամիս ժամկետը լրանում է տվյալ տարվա հուլիսի 1-ից հետո, ապա՝ այդ ժամկետից:

45. Եթե Հանձնաժողովի կողմից ՎԷԱ կայանի տեսակի փոփոխությամբ պայմանավորված Սակագնի վերանայման վերաբերյալ որոշումն ընդունվում է՝

- 1) մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը, ապա սահմանվող Սակագների մեծությունն ընդունվում է տվյալ տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ից այդօրինակ ՎԷԱ կայանների համար գործող Սակագների մեծությանը հավասար.
- 2) տվյալ տարվա հունիս ամսին, ապա Սակագների մեծությունն ընդունվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից այդօրինակ ՎԷԱ կայանների համար գործող Սակագների մեծությանը հավասար:

ԳԼՈՒԽ 15. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

46. Սույն գլուխը սահմանում է Համակարգի օպերատորի կողմից ԷՄՇ մասնակիցներին համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը:
47. Համակարգի օպերատորի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման համար սահմանվում է միադրույք Սակագին ($T_{\Sigma 0}$)՝ հետևյալ բանաձևով. $T_{\Sigma 0} = \frac{U_{\Sigma 0}}{W_U + W_{P\Sigma} + W_{NU} + W_U}$, որտեղ՝
 - 1) $U_{\Sigma 0}$ -ն Համակարգի օպերատորի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված տարեկան անհրաժեշտ հասույթն է (դրամ),
 - 2) W_U -ն ԷՄՇ կանոնների համաձայն Երաշխավորված մատակարարի և Մատակարարների կողմից վճարման ենթակա ծառայության քանակն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ),
 - 3) $W_{P\Sigma}$ -ն ԷՄՇ կանոնների համաձայն Բաշխողի և Հաղորդողի կողմից վճարման ենթակա ծառայության քանակն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ),
 - 4) W_{NU} -ն ԷՄՇ կանոնների համաձայն Որակավորված սպառողների կողմից վճարման ենթակա ծառայության քանակն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ),
 - 5) W_U -ն ԷՄՇ կանոնների համաձայն ԷՄՇ մասնակիցների կողմից էլեկտրական էներգիայի արտահանման (տարանցման) դեպքերում վճարման ենթակա ծառայության քանակն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ):

ԳԼՈՒԽ 16. ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

48. Սույն գլուխը սահմանում է Շուկայի օպերատորի կողմից ԷՄՇ մասնակիցներին էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը:
49. Շուկայի օպերատորի կողմից էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման համար սահմանվում է միադրույք Սակագին ($T_{\Sigma 0}$)՝ հետևյալ բանաձևով. $T_{\Sigma 0} = \frac{U_{\Sigma 0}}{W_U + W_F + W_{NU} + W_U}$, որտեղ $U_{\Sigma 0}$ -ն Շուկայի օպերատորի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված տարեկան անհրաժեշտ հասույթն է (դրամ):

ԳԼՈՒԽ 17. ՀԱՂՈՐԴՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

50. Սույն գլուխը սահմանում է Հաղորդողի կողմից ԷՄՇ մասնակիցներին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը:
51. Հաղորդողի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման համար սահմանվում է միադրույք Սակագին (T_{Σ})՝ հետևյալ բանաձևով. $T_{\Sigma} = \frac{U_{\Sigma}}{W_U + W_F + W_{NU} + W_U}$, որտեղ՝
- 1) U_{Σ} -ն Հաղորդողի համար սույն մեթոդիկայի 2-րդ բաժնի համաձայն հաշվարկված տարեկան անհրաժեշտ հասույթն է (դրամ),
 - 2) W_F -ն ԷՄՇ կանոնների համաձայն Բաշխողի կողմից վճարման ենթակա ծառայության քանակն է, որը որոշվում է ԷՀՏՀ-ի հիման վրա (կՎտժ):

ԳԼՈՒԽ 18. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

52. Սույն գլուխը սահմանում է Համակարգի օպերատորի իրականացրած կարգավարման գործընթացի շրջանակում ԷՀՑ կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման նպատակով ԷՄՇ մասնակիցների կողմից մատուցվող հետևյալ Համակարգային ծառայությունների Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը.
- 1) հաշվեկշռում և (կամ) հաճախականության կարգավորում,
 - 2) ռեակտիվ հզորության և լարման կարգավորում,

3) էլեկտրաէներգետիկական համակարգի վերականգնում լրիվ մարման դեպքում:

53. Հանձնաժողովը սույն մեթոդիկայի 52-րդ կետում նշված Համակարգային ծառայություններ մատուցող Լիցենզավորված անձանց համար, ըստ անհրաժեշտության, կարող է հաշվառման և առանձին սակագնային դրույքներով վճարման ենթակա դարձնել այդ ծառայությունները: Այդ դեպքում սակագնային դրույքների հաշվարկի համար Հանձնաժողովի հետ համաձայնեցված սկզբունքով Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթը բաշխվում է մատուցվող բոլոր ծառայությունների միջև՝ որոշելով յուրաքանչյուր ծառայության մատուցման համար անհրաժեշտ հասույթը: Յուրաքանչյուր Համակարգային ծառայության սակագնային դրույքը կորոշվի որպես նրա համար անհրաժեշտ տարեկան հասույթի և ծառայության տարեկան քանակի հարաբերություն, բացառությամբ սույն մեթոդիկայի 54-րդ կետով սահմանված դեպքերի:

54. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է ԷՄՇ մասնակիցներին Հաշվեկշռման ծառայություն մատուցող միակ Արտադրողը: Հանձնաժողովը սահմանում է Հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն սակագներ: Հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագինը սահմանվում է ԿԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար սահմանվող Երաշխավորված մատակարարին վաճառքի Սակագների նվազագույն մեծությունից ելնելով, իսկ Հաշվեկշռման ծառայության մատուցման առավելագույն սակագինը՝ անհրաժեշտ հասույթի մեծության և առաքվող էլեկտրական էներգիայի քանակից ելնելով: Սույն կետը չի սահմանափակում Հանձնաժողովի իրավունքը ԷՄՇ կանոնների արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով քննարկելու և կիրառելու Հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն սակագների ձևավորման այլ մոտեցումներ:

ԲԱԺԻՆ 4.

ՄԱՆՐԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

ԳԼՈՒԽ 19. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. Սույն բաժինը սահմանում է Երաշխավորված մատակարարի կողմից վերջնական սպառողներին մատակարարվող էլեկտրական էներգիայի և Բաշխողի կողմից մատուցվող Բաշխման ծառայության Սակագների մշակման և կառուցվածքի ընտրության կարգը:
56. Սպառողներին մատակարարվող էլեկտրական էներգիայի և Բաշխման ծառայության մատուցման Սակագների հաշվարկելու նպատակով կատարվում են հետևյալ քայլերը՝
- 1) Երաշխավորված մատակարարի անհրաժեշտ հասցեի որոշում՝ Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն,
 - 2) Բաշխողի անհրաժեշտ հասցեի որոշում՝ Բաշխողի սակագնային համաձայնագրի համաձայն,
 - 3) Երաշխավորված մատակարարի և Բաշխողի ծախսերի դասակարգում,
 - 4) սպառողական խմբերի ձևավորում,
 - 5) սպառողական խմբերի միջև դասակարգված ծախսերի բաշխում,
 - 6) էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման Սակագների հաշվարկ,
 - 7) Բաշխման ծառայության մատուցման Սակագների հաշվարկ:

ԳԼՈՒԽ 20. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

57. Ծախսերի վերլուծության և դրանք սպառողական խմբերի միջև բաշխման նպատակով Երաշխավորված մատակարարի և Բաշխողի բոլոր ծախսերը դասակարգում են երեք խմբի՝
- 1) էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսեր (ներառյալ՝ Երաշխավորված մատակարարի փոխհատուցման գումարը և Բաշխողի փոխհատուցման գումարը), որոնք տարանջատվում են ըստ էլեկտրական էներգիայի բաշխման և երաշխավորված մատակարարման գործառույթների,
 - 2) էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ծախսեր,
 - 3) Բաշխման ծառայության ծախսեր:
58. Էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսը՝
- 1) Բաշխողի մասով (ԳԷԲ) Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի անխուսափելի կորուստի և սեփական ու տնտեսական կարիքների համար գնվող էլեկտրական էներգիայի արժեքն է, որը որոշվում է Բաշխողի սակագնային

համաձայնագրի համաձայն՝ ավելացնելով կամ նվազեցնելով Բաշխողի փոխհատուցման գումարը,

- 2) Երաշխավորված մատակարարի մասով (ԳԷՄ) վերջինիս կողմից գնվող էլեկտրական էներգիայի (առանց Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի անխուսափելի կորուստի և էլեկտրական էներգիայի բաշխման գործունեության համար անհրաժեշտ սեփական ու տնտեսական կարիքների) և ծառայությունների մատուցման արժեքն է, որը որոշվում է Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն՝ ավելացնելով կամ նվազեցնելով Երաշխավորված մատակարարի փոխհատուցման գումարը:

59. Երաշխավորված մատակարարի ծախսերը ներառում են բաժանորդների հաշիվների վարման, իրացված էլեկտրական էներգիայի դիմաց բաժանորդներից գումարների հավաքագրման, անհուսալի դեբիտորական պարտքերի գծով և սպառողների սպասարկման հետ կապված այլ ծախսերը (այդ թվում՝ նորոգման, նյութական, աշխատանքի վճարման ծախսերը և Ներդրումային բաղադրիչները):

60. Էլեկտրական էներգիայի բաշխման ծախսերը ներառում են Բաշխման ցանցի շահագործման և պահպանման ծախսերը (նորոգման, նյութական, աշխատանքի վճարման և այլ ծախսեր), հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի գծով ծախսերը, բացառությամբ սույն մեթոդիկայի 59-րդ կետում նշված ծախսերի: Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների զուտ արժեքի նկատմամբ հաշվարկվող թույլատրելի շահույթը դիտարկվում է որպես ծախս:

ԳԼՈՒԽ 21. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

61. Սպառողական խմբերի ձևավորումն իրականացվում է՝ ելնելով սպառման միանման բնութագրեր ունենալու սկզբունքից:

62. Էլեկտրական էներգիայի սպառողները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝

- 1) 110 կՎ լարմամբ սնվող սպառողներ,
- 2) 35 կՎ լարմամբ սնվող սպառողներ,
- 3) 6(10) կՎ լարմամբ սնվող սպառողներ,
- 4) 0,38 կՎ և ցածր լարմամբ սնվող սպառողներ:

63. Սույն մեթոդիկայի 61-րդ և 62-րդ կետերը չեն սահմանափակում Հանձնաժողովի իրավունքը՝ սեփական նախաձեռնությամբ կամ Երաշխավորված մատակարարի և Բաշխողի առաջարկությամբ էլեկտրական էներգիայի վաճառքի և Բաշխման ծառայության մատուցման Սակագների վերանայման ժամանակ քննարկելու և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանելու այլ սպառողական խմբեր:

ԳԼՈՒԽ 22. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

64. Ծախսերի բաշխումը սպառողական խմբերի միջև իրականացվում է հետևյալ փուլերով.

- 1) էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսերի բաշխում,
- 2) երաշխավորված մատակարարման ծախսերի բաշխում,
- 3) Բաշխման ծառայության ծախսերի բաշխում:

65. Էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսերը՝

- 1) բաշխման գործառույթի մասով սպառողական խմբերի միջև բաշխվում են՝ համաձայն հետևյալ բանաձևի. $ԳԷ_{Բk} = \frac{ԳԷ_{Բ}}{\sum_{k=1}^n (\Delta E_k + E_{Uk})} * (\Delta E_k + E_{Uk})$, որտեղ՝

ա. **ԳԷ_{Բk}-ն** Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի անխուսափելի կորուստի և սեփական ու տնտեսական կարիքների համար Բաշխողի կողմից էլեկտրական էներգիայի գնման ծախսերն են k-րդ սպառողական խմբի մասով (դրամ),

բ. **ԳԷ-ն** Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի անխուսափելի կորուստի և սեփական ու տնտեսական կարիքների համար Բաշխողի կողմից էլեկտրական էներգիայի գնման ընդամենը ծախսերն են (դրամ),

գ. **ΔE_k-ն** Բաշխման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստներն են՝ առաջացած k-րդ սպառողական խմբին պատկանող՝ Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և այլ սպառողներին (այդ թվում՝ Որակավորված սպառողներին) էլեկտրական էներգիայի մատակարարման և սեփական կարիքների օգտագործման հետևանքով, որը որոշվում է սույն մեթոդիկայի 66-րդ կետի համաձայն (կվտժ),

դ. **E_{Uk}-ն** սեփական կարիքների համար Բաշխողի կողմից գնվող էլեկտրական էներգիայի քանակն է k-րդ սպառողական խմբի մասով (կվտժ),

- 2) երաշխավորված մատակարարման գործառույթի մասով սպառողական խմբերի միջև բաշխվում են՝ համաձայն հետևյալ բանաձևի. $ԳԷ_{Uk} = \frac{ԳԷ_U}{\sum_{k=1}^n E_k} * E_k$, որտեղ՝

- ա. **ԳԷ_Կ-ն** Երաշխավորված մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսերն են k -րդ սպառողական խմբի համար (դրամ),
- բ. **ԳԷ_Ե-ն** Երաշխավորված մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) գնման ծախսերն են բոլոր սպառողական խմբերի համար (դրամ),
- գ. **Է_Կ-ն** Երաշխավորված մատակարարի կողմից k -րդ սպառողական խմբի սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի տարեկան քանակն է (կՎտժ):

66. ΔE_k մեծությունը որոշվում է՝ համաձայն հետևյալ սկզբունքի.

- 1) սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով 110 կՎ լարման գծերում առաջացած էլեկտրական էներգիայի կորուստները բաշխվում են 110 կՎ, 35 կՎ, 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,
- 2) սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով 110 կՎ լարման ենթակայաններում և 35 կՎ լարման գծերում առաջացած էլեկտրական էներգիայի կորուստները բաշխվում են 35 կՎ, 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,
- 3) սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով 35 կՎ լարման ենթակայաններում և 6(10) կՎ լարման գծերում առաջացած էլեկտրական էներգիայի կորուստները բաշխվում են 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,
- 4) սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով 6(10) կՎ լարման ենթակայաններում և 0,38 կՎ ու ցածր լարման գծերում առաջացած էլեկտրական էներգիայի կորուստները ամբողջությամբ վերագրվում են 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբին:

67. Էլեկտրական էներգիայի Բաշխման ծառայության ծախսերը սպառողական խմբերի միջև բաշխվում են հետևյալ կերպ.

- 1) Բաշխողն իր հաշվապահական հաշվառումը իրականացնում է այնպես, որ հաշվապահական հաշվառման համակարգում գրանցված տեղեկատվությունը հնարավոր լինի դուրս բերել և ամփոփել ըստ Ուղղակի ծախսերի և Անուղղակի ծախսերի,

իսկ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ Բաշխման ցանցի տեխնոլոգիական տարրերի,

- 2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տեղեկատվության և ծախսերի կառուցվածքի վերլուծության հիման վրա որոշվում է Բաշխողի հաշվարկային անհրաժեշտ հասույթի կազմում ներառվող էլեկտրական էներգիայի բաշխման ծախսերի, Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների (ոչ նյութական ակտիվների) արժեքի նկատմամբ հաշվարկվող մաշվածության (ամորտիզացիայի) գծով ծախսերի և շահույթի՝ Բաշխման ցանցի յուրաքանչյուր տեխնոլոգիական տարրին ուղղակիորեն վերագրելի մեծությունները,
- 3) անհրաժեշտ հասույթի կազմում ներառվող Անուղղակի ծախսերը Բաշխման ցանցի տեխնոլոգիական տարրերի միջև բաշխվում են ըստ Ուղղակի ծախսերի համամասնության, իսկ Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների (ոչ նյութական ակտիվների) արժեքի նկատմամբ հաշվարկվող մաշվածության (ամորտիզացիայի) գծով ծախսերի ու շահույթի՝ Բաշխման ցանցի տեխնոլոգիական տարրերին ուղղակիորեն չվերագրված մեծությունները՝ ըստ ուղղակիորեն վերագրված արժեքների համամասնության,
- 4) Բաշխման ցանցի տեխնոլոգիական տարրերին վերագրված Ուղղակի ծախսերը, Անուղղակի ծախսերը և հիմնական միջոցների (ոչ նյութական ակտիվների) մաշվածության (ամորտիզացիայի) գծով ծախսերի ու թույլատրելի շահույթի մեծությունները սպառողական խմբերի միջև բաշխվում են հետևյալ կերպ.

ա. 110 կՎ լարման Բաշխման ցանցի ծախսերը բաշխվում են 110 կՎ, 35 կՎ, 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,

բ. 35 կՎ լարման Բաշխման ցանցի ծախսերը բաշխվում են 35 կՎ, 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,

գ. 6(10) կՎ լարման Բաշխման ցանցի ծախսերը բաշխվում են 6(10) կՎ և 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբերի միջև ըստ նրանց սպառման ծավալների համամասնության,

դ. 0,38 կՎ ու ցածր լարման Բաշխման ցանցի ծախսերը ամբողջությամբ վերագրվում են 0,38 կՎ ու ցածր լարման սպառողական խմբին:

68. Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ծախսերը սպառողական խմբերի միջև բաշխվում են հետևյալ կերպ՝

- 1) Էլեկտրական էներգիայի վաճառքի դիմաց բաժանորդներից գումարների հավաքագրման գծով ծախսերն ամբողջությամբ վերագրվում են 0,38 կՎ և ցածր լարման սպառողական խմբին,
- 2) սպառողների սպասարկման մյուս ծախսերը բաշխվում են ըստ սպառողական խմբերի բաժանորդների թվաքանակի համամասնության:

ԳԼՈՒԽ 23. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

69. Սպառողական խմբերի համար Երաշխավորված մատակարարի կողմից Էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագները սահմանվում են միադրույք սակագնային համակարգում: Միադրույք սակագնային համակարգում վճարման ենթակա ծառայությունն է Էլեկտրական էներգիայի սպառումը, որի չափման միավորն է դրամ/կՎտժ-ը:

70. Էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները չեն վերանայվում, եթե Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն որոշված Երաշխավորված մատակարարի հաշվարկային անհրաժեշտ հասույթը հավասար է սակագների տվյալ վերանայման ժամանակ կանխատեսվող սպառման ծավալներով և Երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին վաճառվող Էլեկտրական էներգիայի գործող սակագներով ձևավորվող հաշվարկային հասույթին:

71. Սույն մեթոդիկայի 70-րդ կետով նախատեսված պայմանի չբավարարման դեպքում՝

- 1) ըստ սպառողական խմբերի միջև ծախսերի բաշխման սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր k-րդ սպառողական խմբի համար Էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագինը ($ՍԷ_k$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՍԷ_k = \frac{ԳԷ_{Սk} + ԵՄԾ_k}{Է_k} + \frac{ԳԷ_{Բk} + ԲԾ_k}{Է_k + Է_{Այլk}}, \text{ որտեղ՝}$$

ա. **ԵՄԾ_k**-ն Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ծախսերի մեծությունն է k-րդ սպառողական խմբի համար (դրամ),

բ. $\mathbf{P\mathcal{D}_k}$ -ն Բաշխման ծառայության ծախսերի մեծությունն է k -րդ սպառողական խմբի համար (դրամ),

գ. $\mathbf{E_{այk}}$ -ն k -րդ սպառողական խմբին պատկանող սպառողների (այդ թվում՝ Որակավորված սպառողների) կողմից սպառվող այն էլեկտրական էներգիայի տարեկան քանակն է, որը մատակարարվում է Մատակարարների, այլ անձանց կողմից, առաքվում է սեփական սպառման համար և մուտք է գործում Բաշխման ցանց (կվտժ):

2) սպառողական խմբերի նկատմամբ Սակագների վերանայման հավասարաչափ ազդեցության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ բոլոր սպառողական խմբերի համար էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագները վերանայվում են հավասարաչափ Երաշխավորված մատակարարի կողմից վաճառվող էլեկտրական էներգիայի միջին կշռված Սակագնի փոփոխության չափով.

3) սպառողական առանձին խմբերի համար էլեկտրական էներգիայի մատչելիության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագները վերանայվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Երաշխավորված մատակարարի սակագնային համաձայնագրի համաձայն որոշված Երաշխավորված մատակարարի հաշվարկային անհրաժեշտ հասույթն ապահովող մոտեցմամբ:

72. Օրվա տարբեր ժամերով տարբերակված Սակագների (ըստ ժամային տիրույթների) կիրառման դեպքում սպառողական խմբերի համար հաշվարկված էլեկտրական էներգիայի վաճառքի Սակագները ($\mathbf{U\mathcal{E}_k}$) հանդիսանում են միջին կշռությային մեծություններ, որոնք պետք է համապատասխանեն հետևյալ բանաձևին. $\mathbf{U\mathcal{E}_k} = \frac{\sum \mathbf{U\mathcal{E}_{ki}} * \mathbf{E_{ki}}}{\sum \mathbf{E_{ki}}}$, որտեղ՝

1) $\mathbf{U\mathcal{E}_{ki}}$ -ն k -րդ սպառողական խմբի համար սահմանվող էլեկտրական էներգիայի վաճառքի i -րդ ժամային տիրույթի Սակագինն է (դրամ/կվտժ),

2) $\mathbf{E_{ki}}$ -ն k -րդ սպառողական խմբի կողմից i -րդ ժամային տիրույթում էլեկտրական էներգիայի սպառման տարեկան քանակն է սակագնային տարվա համար (կվտժ):

ԳԼՈՒԽ 24. ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

73. Բաշխման ծառայության մատուցման Սակագները սահմանվում են միադրույք սակագնային համակարգում և տարբերակվում են ըստ սույն բաժնի համաձայն որոշված սպառողական խմբերի՝ հաշվի առնելով նաև ԷՄՇ կանոնների պահանջները:
74. Բաշխման ծառայության մատուցման Սակագները ($ՍԲԾ_k$) հաշվարկվում են՝ համաձայն հետևյալ բանաձևի. $ՍԲԾ_k = \frac{q_{\text{էբ}k} + \text{ԲԾ}_k}{\text{է}_k + \text{է}_{\text{սյ}k}} :$

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային կարգավորման ենթակա լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Սակագների սահմանման ու վերանայման գործընթացը:
2. Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացություններն են՝
 - 1) **Արտադրող՝** էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության իրավունք ունեցող և փաստացի արտադրող անձ, բացառությամբ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում գտնվող կայանի.
 - 2) **Երաշխավորված մատակարար՝** էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ.
 - 3) **ԿԷԱ կայան՝** 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի, ՎԷԱ կայանի, ՀԷԱ կայանի և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի.
 - 4) **Համակարգային ծառայություններ՝** էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և անվտանգ աշխատանքի համար էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների կողմից ԷՀՑ կանոններով սահմանված դեպքերում և կարգով մատուցվող ծառայություններ.
 - 5) **Հայտ՝** Սակագնի սահմանման կամ վերանայման համար Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթ.
 - 6) **Հայտատու՝** Սակագնի սահմանման կամ վերանայման Հայտ ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.
 - 7) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 8) **Հաշվեկշռման ծառայություն՝** էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոններով նախատեսված Համակարգային ծառայության տեսակ.

9) **ՀԷԱ կայան՝**

Հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող Արտադրող.

10) **ՊԷԱ կայան՝**

պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում գործող Արտադրող, բացառությամբ ՀԷԱ կայանի.

11) **Սակագին՝**

Էլեկտրական էներգիայի (հզորության) միավորի վաճառքի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար Հանձնաժողովի կողմից «Էներգետիկայի մասին» օրենքին համապատասխան սահմանված առավելագույն գին կամ վճար.

12) **ՎԷԱ կայան՝**

«Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված Էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի:

3. Էլեկտրաէներգետիկական համակարգում սակագնային կարգավորման ենթակա են Հանձնաժողովի կողմից հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեության հետևյալ տեսակները.

- 1) Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն՝ ԿԷԱ կայանների, ՎԷԱ կայանների, ՊԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի կողմից,
- 2) Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցում,
- 3) Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցում,
- 4) Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցում,
- 5) Հանձնաժողովի սահմանած դեպքերում Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների կողմից Համակարգային ծառայությունների մատուցում,
- 6) Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցում,
- 7) Երաշխավորված մատակարարի կողմից Էլեկտրական էներգիայի վաճառք սպառողներին:

4. Հանձնաժողովի կողմից հաստատված Լիցենզավորված անձի լիցենզիայի պայմանների կամ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված պայմանագրի մաս կազմող սակագնային համաձայնագրում Սակագների սահմանման (վերանայման) այլ մոտեցումներ ամրագրված լինելու դեպքում կիրառվում են նշված մոտեցումները:

5. Սահմանված Սակագինը կարող է վերանայվել ինչպես Լիցենզավորված անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:
6. Սակագների գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
7. Հայտատուն օրենքներով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
8. Հայտատուի կողմից Հանձնաժողով ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է վավերացված լինեն տվյալ Լիցենզավորված անձի կնիքով (առկայության դեպքում) և լիազորված անձի ստորագրությամբ:

2. ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

9. Սակագների սահմանման կամ վերանայման համար Հայտատուն համապատասխան հաշվարկներով և հիմնավորումներով Հայտ է ներկայացնում Հանձնաժողով՝ երկու օրինակից (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ մեկ օրինակից)՝ համաձայն սույն կարգի N¹ հավելվածով սահմանված փաստաթղթերի ցանկի: Հայտատուն Հայտը Հանձնաժողով մուտքագրում է սույն կարգի N³ հավելվածով սահմանված ձևով հայտարարությունը հրապարակելուց ոչ ուշ, քան 20 աշխատանքային օր հետո: Հայտատուն սույն կարգի N³ հավելվածով սահմանված ձևով կազմված հայտարարությունը տեղադրում է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.azdarar.am/>):
10. Հայտը Հանձնաժողովում մուտքագրվելուց հետո Հանձնաժողովի աշխատակազմը սույն կարգի 11-րդ կետում նշված ժամկետում ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը:
11. Հանձնաժողովը Հայտն ուսումնասիրության ընդունելու կամ չընդունելու մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտը Հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:
12. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝
 - 1) բացակայում է սույն կարգի N¹ հավելվածով սահմանված փաստաթղթերից որևէ մեկը, Հայտում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին.

- 2) ներկայացված փաստաթղթերում և տեղեկատվություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ,
 - 3) Հանձնաժողովը չի ընդունել ուսումնասիրության կամ մերժել է Հայտատուի՝ լիցենզիա ստանալու հայտը կամ Սակագնի սահմանման կամ վերանայման համար հիմք հանդիսացող՝ լիցենզիայում փոփոխություններ կատարելու դիմումը:
13. Հայտն ուսումնասիրության չընդունելու դեպքում՝
- 1) այն Հայտատուին չի վերադարձվում և պահպանվում է Հանձնաժողովում,
 - 2) Հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո, կարող է նոր Հայտով դիմել Հանձնաժողով, որի դեպքում Հայտատուն իրավունք ունի գրավոր հղում կատարել նախկին Հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում ներկայացված տվյալները նոր Հայտի ներկայացման պահին չեն փոփոխվել:
14. Սույն կարգի 12-րդ կետում նշված հիմքեր չհայտնաբերելու դեպքում Հայտն ընդունվում է ուսումնասիրության, որի արդյունքներով Հանձնաժողովը Հայտը մերժում է կամ Սակագինը սահմանում, վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և համապատասխան որոշում է կայացնում ուսումնասիրության ընդունված Հայտը Հանձնաժողով ներկայացնելու օրվանից հետո՝ 80 աշխատանքային օրվա ընթացքում (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում):
15. Հայտի ուսումնասիրության ընթացքում Հայտատուն կարող է դիմել Հանձնաժողով՝ Հայտի ուսումնասիրությունը դադարեցնելու համար: Այս դեպքում Հայտատուն կարող է նոր Հայտով կրկին դիմել Հանձնաժողով՝ անհրաժեշտության դեպքում հղում կատարելով նախկին Հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում նոր Հայտի ներկայացման պահին փոփոխություններ տեղի չեն ունեցել:
16. Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե Սակագնի սահմանման վերաբերյալ առաջին անգամ Հայտ ներկայացնող անձի լիցենզիա ստանալու հայտը կամ Սակագնի սահմանման կամ վերանայման համար հիմք հանդիսացող՝ լիցենզիայում փոփոխություններ կատարելու դիմումը չի ընդունվել ուսումնասիրության կամ մերժվել է:
17. Սակագների սահմանման կամ վերանայման (դրանց մերժման) վերաբերյալ Հանձնաժողովի որոշման պատճենը սահմանված կարգով ուղարկվում է Հայտատուին:
18. Սպառողների համար Սակագների սահմանման կամ վերանայման դեպքում՝
- 1) Հայտն ուսումնասիրության ընդունելու մասին Երաշխավորված մատակարարին տեղեկացնելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայտը տեղադրվում

է Հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին և շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու Հայտին, ներկայացնելու իրենց առաջարկները և ստանալու պարզաբանումներ, որի ապահովման նպատակով Հանձնաժողովի ինտերնետային կայքում հրապարակվում է նաև համապատասխան ստորաբաժանման հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) Երաշխավորված մատակարարը Հայտը Հանձնաժողովի ինտերնետային կայքում հրապարակվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում է քննարկում՝ բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու սպառողների Սակագների վերանայմանը հանգեցնող գործոնները և իր պարզաբանումները: Քննարկման տեղի և ժամի մասին Երաշխավորված մատակարարը պետք է իրազեկի առնվազն 3 աշխատանքային օր առաջ,

3) Սակագների սահմանման (վերանայման) մասին որոշման նախագիծը Հանձնաժողովի նիստում քննարկելուց՝

ա. առնվազն 6 աշխատանքային օր առաջ Սակագների վերաբերյալ Հանձնաժողովի աշխատակազմի հաշվարկները՝ Հայտով ներկայացված հաշվարկների հետ համեմատականով, տեղադրվում են Հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին և շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու, ներկայացնելու իրենց առաջարկությունները և ստանալու պարզաբանումներ,

բ. առնվազն 1 աշխատանքային օր առաջ սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների և Երաշխավորված մատակարարի ներկայացուցիչների մասնակցությամբ Հանձնաժողովում կազմակերպվում է քննարկում, որի տեղի և ժամի մասին Հանձնաժողովը իր ինտերնետային կայքում տեղադրում է համապատասխան հայտարարություն առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԲ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

19. Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ սույն կարգի համաձայն կարող է վերանայել գործող Սակագինը և սահմանել նոր Սակագին՝ ելնելով Լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից, Ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված դեպքերում:

20. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ Սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝
- 1) այդ մասին գրավոր տեղեկացնում է Լիցենզավորված անձին, բացառությամբ ՎԷԱ կայանների.
 - 2) Լիցենզավորված անձից կարող է պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող՝ Սակագնի տարր կազմող ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:
21. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սպառողների համար Սակագների սահմանման կամ վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝
- 1) սույն կարգի 20-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գրավոր տեղեկացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում հրապարակում է հաղորդագրություն Սակագների վերանայման գործընթաց սկսելու վերաբերյալ՝ նշելով նաև Սակագների վերանայման գործընթաց սկսելու հանգամանքները.
 - 2) սույն կարգի 18-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընթացակարգին համապատասխան իրականացնում է քննարկում:
22. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ Սակագինը վերանայում է Լիցենզավորված անձին այդ մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո 80 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ ՎԷԱ կայանների:

ՑԱՆԿ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. ՎԷԱ կայանների համար՝
 - 1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
 - 2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի:
2. ԿԷԱ կայանների, ՊԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար՝
 - 1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
 - 2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
 - 3) տեղեկատվություն էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսվող արտադրանքի վերաբերյալ՝
 - ա. հիդրոէլեկտրակայանում (հիդրոէլեկտրակայանների համալիրում)՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-1-ի,
 - բ. ատոմային էլեկտրակայանում՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-2-ի,
 - գ. ջերմային էլեկտրակայանում՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-3-ի,
 - 4) Արտադրողի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկ՝ ԿԷԱ կայանների, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագիր չունեցող ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի դեպքում համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-1-ի, իսկ ՊԷԱ կայանների և

պետություն-մասնավոր գործընկերության պայմանագիր ունեցող ՀԷԱ կայանների դեպքում՝ լիցենզիայի պայմաններում կամ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնված պայմանագրի մաս կազմող սակագնային համաձայնագրում ամրագրված մոտեցումներին համապատասխան:

3. Հաղորդողի, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի համար՝

- 1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
- 2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
- 3) տեղեկատվություն հաղորդվող էլեկտրական էներգիայի կանխատեսման վերաբերյալ (ներկայացվում է միայն Հաղորդողի կողմից)՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-4-ի,
- 4) էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-2-ի:

4. Բաշխողի և Երաշխավորված մատակարարի համար՝

- 1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
- 2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
- 3) տեղեկատվություն Բաշխման ցանց էլեկտրական էներգիայի մուտքի և առաքման կանխատեսման վերաբերյալ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-5-ի,
- 4) Բաշխողի կողմից Բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-3-ի,
- 5) Երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-4-ի:

5. Սույն հավելվածի 1-4-րդ կետերով (բացառությամբ 2-րդ ենթակետերի) սահմանված ձևերով Հայտատուի կողմից Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն լիազորված անձի ստորագրությամբ և Հայտատուի կնիքով (առկայության դեպքում):
6. Սույն հավելվածի 2-4-րդ կետերի 3-րդ, 4-րդ և 4-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված ձևերով նախատեսված ցուցանիշները Հայտատուների կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ****ԴԻՄՈՒՄ****1. Խնդրում եմ**

(սահմանել, վերանայել)

(Հայտատու իրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը (անունը, ազգանունը), կազմակերպական-իրավական ձևը)

(առկայության դեպքում՝ կայանի տեսակը և անվանումը)

(գործունեության վայրը (աշխարհագրական տարածքը)

սակագինը (դրույքը կամ վճարը):

(գործունեության տեսակը, որի համար սահմանվում կամ վերանայվում է
սակագինը)

Առաջարկվող սակագինը (դրույքը)՝

_____	_____
(նշվում է մեծությունը և չափման միավորը)	(նշվում է ավելացված արժեքի հարկը ներառված լինելը կամ չլինելը)

Առաջարկվող ամսական վճարը (առկայության
դեպքում)՝

_____	_____
(նշվում է մեծությունը և չափման միավորը)	(նշվում է ավելացված արժեքի հարկը ներառված լինելը կամ չլինելը)

2. Դիմումին կցվում են՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____

**3. Հայտատու իրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը, (անունը, ազգանունը),
կազմակերպական-իրավական ձևը****4. Գտնվելու (բնակության) վայրը** _____**5. Հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն** _____**6. Պետական գրանցման (հաշվառման) համարը, հարկ վճարողի հաշվառման համարը****7. Սակագնի սահմանման (վերանայման) հայտով ներկայացված տեղեկությունների և
փաստաթղթերի իսկությունը հաստատում եմ:****8. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ սակագնի սահմանման (վերանայման)
գործընթացին առնչվող իրազեկումն իրականացվի սույն դիմումով ներկայացված
էլեկտրոնային փոստի հասցեով:**

(Հայտատուի (գործադիր մարմնի ղեկավարի) անուն, ազգանուն, ստորագրություն, Կ. Տ. (առկայության դեպքում))

(օրը, ամիսը, տարին)

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

(Հայտատուի և առկայության դեպքում՝ կայանի անվանումը)

(աշխարհագրական տարածքը (բնակավայրը, մարզը, քաղաքը))

մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով՝

(լիցենզավորված գործունեության իրականացման տեսակը, որի համար սահմանվում կամ վերանայվում է սակագինը)

սակագնի սահմանման (վերանայման) հայտով:

Գործող սակագինը (դրույքը)՝ _____

Գործող ամսական վճարը (առկայության դեպքում)՝ _____

Առաջարկվող սակագինը (դրույքը)՝ _____

Առաջարկվող ամսական վճարը (առկայության դեպքում)՝ _____

(Հայտատուի գտնվելու վայրը, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն)

(Հայտատուի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ (ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ) ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20__թ. _____ -ից 20__թ. _____ -ը
(նշել ժամանակաշրջանը)

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը փարի	այդ թվում՝ ըստ ամիսների											
															
1.	Պայմանագրային հզորությունը	ՄՎտ													
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	հազ. կՎտժ													
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը	հազ. կՎտժ													
4.	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական և տնտեսական կարիքների համար՝														
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
5.	Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստները կայանի տարրերում՝														
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
6.	Էլեկտրական էներգիայի ծախսը սինքրոն կոմպենսատորի ռեժիմում	հազ. կՎտժ													
7.	Սեփական և տնտեսական կարիքների համար այլ Լիցենզավորված անձից գնվող էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը, ընդամենը	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ մլն դրամ													
1)	այդ թվում՝	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
2)		հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
8.	Սևանա լճից բաց թողնված ջրի քանակը, որից՝	մլն խմ													
1)	էներգետիկ նպատակներով	մլն խմ													
9.	Կայանով անցած ջրի քանակը	մլն խմ													
10.	Կայանով անցած կողային ջրի քանակը	մլն խմ													
11.	Ոռոգման նպատակով բաց թողնված ջրի քանակը, որից՝	մլն խմ													
1)	ջրի կորուստները	մլն խմ													
12.	Ջրի ծավալը ջրամբարներում	մլն խմ													
1)		մլն խմ													
2)		մլն խմ													

1. Սույն ձևի աղյուսակի 7-րդ կետում գնված էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը նշել նաև ըստ լարման տեսակների (սակագնային դրույքների):
2. Սույն ձևի աղյուսակի 8-րդ կետը լրացվում է միայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից:
3. Սույն ձևի աղյուսակի 12-րդ կետում նշել ջրամբարների անվանումները:

(Հայտատուի ղեկավարի ստորագրությունը) (անուն, ազգանունը)
Կ.Տ. (առկայության դեպքում)

(Հայտատուի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20__թ. _____ -ից 20__թ. _____ -ը
(նշել ժամանակաշրջանը)

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը տարի	այդ թվում՝ ըստ ամիսների											
															
1.	Պայմանագրային հզորությունը	ՄՎտ													
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	հազ. կՎտժ													
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը	հազ. կՎտժ													
4.	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական կարիքների համար	հազ. կՎտժ													
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
5.	Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստները կայանի տարրերում՝	հազ. կՎտժ													
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
6.	Սեփական և տնտեսական կարիքների համար այլ Լիցենզավորված անձից գնվող էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը, ընդամենը	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
1)	այդ թվում՝	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
2)		հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													

1. Սույն ձևի աղյուսակի 6-րդ կետում գնված էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը նշել նաև ըստ լարման տեսակների (սակագնային դրույքների):

(Հայտատուի ղեկավարի ստորագրությունը)
Կ.Տ. (առկայության դեպքում)

(անուն, ազգանունը)

(Հայտատուի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՋԵՐՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20____ թ. _____ -ից 20____ թ. _____ -ը
(նշել ժամանակաշրջանը)

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը տարի	այդ թվում՝ ըստ ամիսների											
															
1.	Պայմանագրային հզորությունը	ՄՎտ													
2.	Էլեկտրական էներգիայի արտադրությունը	հազ. կՎտժ													
3.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը	հազ. կՎտժ													
4.	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական կարիքների համար (Էլեկտրական էներգիայի արտադրության համար)														
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
5.	Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստները կայանի տարրերում՝	հազ. կՎտժ													
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
3)	կայանի աշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
4)	կայանի չաշխատելու ընթացքում	հազ. կՎտժ													
6.	Սեփական և տնտեսական կարիքների համար այլ Լիցենզավորված անձից գնվող էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը (Էլեկտրական էներգիայի արտադրության համար), ընդամենը	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
1)	այդ թվում՝	հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
2)		հազ. կՎտժ													
		դրամ/կՎտժ													
		մլն դրամ													
7.	Վառելիքի տեսակարար ծախսը էլեկտրական էներգիայի օգտակար առաքման համար	գ. ա. վ./կՎտժ													
8.	Էներգակիրների ջերմարարության գործակիցը՝														
1)	բնական գազ														
2)	սինթետիկ գազ														
3)	մազութ														
4)	_____														
9.	Էներգակիրների ծախսը էլեկտրաէներգիայի արտադրության համար, ընդամենը	հազ. տ. ա. վ.													
1)	բնական գազ	հազ. տ. ա. վ.													
		մլն խմ													
2)	սինթետիկ գազ	հազ. տ. ա. վ.													
		մլն խմ													
3)	մազութ	հազ. տ. ա. վ.													
		մլն խմ													
4)	_____	հազ. տ. ա. վ.													
		հազ. տ.													

1. Սույն ձևի աղյուսակի 6-րդ կետում գնված էլեկտրական էներգիայի քանակը, սակագինը և արժեքը նշել նաև ըստ լարման տեսակների (սակագնային դրույքների):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20____թ. _____-ից 20____թ. _____-ը
(նշել ժամանակաշրջանը)

[illegible]

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը փարի	այդ թվում՝ ըստ ամիսների											
															
6)		հազ. կՎտժ													
3.	Էլեկտրական էներգիայի ծախսը սեփական և տնտեսական կարիքների համար														
1)	բնեղեն արտահայտությամբ	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
4.	Հաղորդվող էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստները														
1)	բնեղեն արտահայտությամբ, այդ թվում՝	հազ. կՎտժ													
ա.	ներքին սպառման համար	հազ. կՎտժ													
բ.	արտահանման համար	հազ. կՎտժ													
2)	տոկոսային արտահայտությամբ	%													
ա.	ներքին սպառման համար	%													
բ.	արտահանման համար	%													

1. Սույն ձևի աղյուսակի 1-ին կետի 1-6-րդ ենթակետերի պարբերությունները լրացնել ըստ Արտադրողների: Ընդ որում, մինչև 10 ՄՎտ հզրությամբ Արտադրողները կարող են միավորվել և լրացվել մեկ պարբերությամբ:

(Հայտատուի ղեկավարի ստորագրությունը)
Կ.Տ. (առկայության դեպքում)

(անուն, ազգանունը)

[illegible]

[illegible]

№	Անվանումներ	Չափի միավոր	Ընդամենը տարի	այդ թվում՝ ըստ ամիսների											
